

ԿԱՐԾԻՔ

ՏԱԹԵՎԻԿ ՍՈԿՐԱՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ «NAHĠ AL-BALĀĠA-Ն ՈՐՊԵՍ ՎԱՂ
ՇՐՋԱՆԻ ՇԻԱ ԻՍԼԱՄԻ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ» ՎԵՐՏԱՈՈՒԹՅԱՄԲ
Է. 00.05 «ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրապարակային պաշտպանության ներկայացված Տաթևիկ Մկրտչյանի ատենախոսությունը նվիրված է վաղ շրջանի շիա իսլամի ուսումնասիրության կարևորագույն աղբյուրներից մեկի՝ «Նահիջ ալ-բալադա» (Ճարտասանության ուղի) կոթողային աշխատությանը՝ արդարադատ չորրորդ խալիֆա և շիա իսլամի առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբի քարոզ-ճառերի, ուղերձ-նամակների և իմաստուն խոսքերի ընտրանի ժողովածուին, որը հավաքել և գրառել է միջնադարի բաղդադցի ականավոր շիա գիտնական և պոետ ալ-Շարիֆ ալ-Ռադին (970-1015թթ.):

Ինչպես հայտնի է, ալ-Ռադին ապրել և ստեղծագործել է Աբբասյան խալիֆայությունում տիրող սոցիալական և ռազմաքաղաքական խորը ճգնաժամի պայմաններում, որտեղ նոր թափ էր ստացել հակաարաբական և հակաավատատիրական պայքարը: Աբբասյան արքունիքի աստիճանական քայքայումը և սուննիականության դիրքերի թուլացումն արևելյան խալիֆայության թերևս ողջ նահանգներում ուղեկցվում էին շիաների ակտիվ գործողություններով և անջատողական շարժումներով: Այդ գործում հիմնական դերակատարումն ստանձնեցին հենց իրանցիները: Օգտվելով ստեղծված ռազմաքաղաքական բարենպաստ իրադրությունից, սկսած IX դարից արևելյան խալիֆայությունում ի հայտ եկան անկախ և կիսանկախ դինաստիաներ: Հակաարաբական այդ շարժումների ընթացքում Արևմտյան Իրանում առավել աչքի ընկավ IX դարում շիա իսլամ ընդունած դայլամների (հայկական աղբյուրներում դըլմիկներ) իշխանությունը:

Ակնհայտ է, որ Կասպից ծովի հարավ-արևմուտքում գտնվող Դայլամի լեռնային աղքատ բնակչությունն ապրուստի միջոցներ հայթայթելու համար սկսեց լքել իր հայրենիքը, և ծառայության անցավ տարբեր տիրակալների վարձկան զորքերում: Արևմտյան Իրանում X դ. 20-30-ական թթ. ընթացող ռազմական գործողությունների ընթացքում աչքի ընկան դայլամցի գյուղական ծագում ունեցող երեք եղբայրներ՝ Ալի, Հասան և Ահմադ Բուիները կամ Բուվայհիները: 935թ. նրանց հաջողվեց հիմնել Բուիների հզոր դինաստիան (935-1055թթ.), որը իրադրության տեր դարձավ ողջ Արևմտյան Իրանում և հարակից շրջաններում:

945թ. դեկտեմբերին Բուի Ահմադը հարձակվեց Բաղդադի վրա և գրեթե առանց դժվարության գրավեց այն: Բուիների հուժկու հարվածների հետևանքով Աբբասյան խալիֆաները շուրջ երկու հարյուր տարի գրկվեցին քաղաքական իշխանությունից, իսլամական աշխարհում ճանաչվեց միայն նրանց հոգևոր իշխանությունը: Մեր կարծիքով, Բուիների՝ պատմության թատերաբեմում ի հայտ գալը և նրանց տարած հաղթանակը ընդդեմ սուննի Աբբասյան խալիֆայության, նոր թափ հաղորդեցին շիականությանն ընդհանրապես և նրա գաղափարախոսության տարածմանն ու ընդունմանը: Պատահական չէ, որ ըստ միջնադարյան արաբալեզու սկզբնաղբյուրների, այս շրջանում է՝ գրադաշտական կրակե տների առկայության հետ մեկտեղ, X-XI դդ. իրանական նահանգներում զանգվածային տարածում է ստանում իսլամի շիա ուղղությունը:

Այսպիսով, իրանական տարրի ռազմաքաղաքական ակտիվ գործողություններով պայմանավորված ստեղծված նոր իրավիճակում իր «Նահջ ալ-բալադա» կոթողային աշխատությունն է շարադրում իրադարձությունների ականատես, շիա մեծ գիտնական ալ-Շարիֆ ալ-Ռադին: Պետք է ենթադրել, որ «Նահջ ալ-բալադան», որպես շիական ուսմունքի հույժ կարևոր սկզբնաղբյուր, դարձավ շիականության հազվագյուտ գրավոր վավերագիրը՝ իսլամի երկու ուղղությունների երկար ու ձիգ դարերի հակամարտության ընթացքում: Այս իսաստով, մեզանում նման բարդ թեմայի ընտրությունը և խրթին տեքստերի մշակումը շնորհակալ աշխատանք է և խիստ կարևոր է թե՛ գիտական, և թե՛ քաղաքական առումներով: Միանգամայն ճիշտ է ատենախոս Տ. Մկրտչյանը, որ «Նահջ ալ-բալադան» ընկալում է ոչ միայն որպես VII դարի պատմական իրադարձությունների համատեքստը վերհանող աղբյուր, այլև՝ տեքստի X դարի իրողություններին համահունչ մի խմբագրական ժողովածու: Այս առումով «Նահջ ալ-բալադան» ներկայացվում է ոչ թե պարզապես որպես հռետորական կամ բարոյագիտական ժողովածու, այլ՝ որպես շիա քաղաքական մտքի մի համադրություն, որը ձևավորվել է, ինչպես հայտնի է, կոնկրետ սոցիալ-քաղաքական իրադրության պայմաններում դավանաբանական ուսմունքի զարգացման պահանջների թելադրանքով: Ատենախոսը ցույց է տվել, որ կազմող-հեղինակի կողմից տեքստի ընտրության և ձևի բովանդակության համատեքստը Բուիների ժամանակաշրջանի շիա ինտելեկտուալ շրջանակների ստեղծագործություններին բնորոշ համադրություն էր, որտեղ բովանդակության և հեղինակության հարցերը սերտորեն կապված էին գաղափարական գործառույթի հետ:

Շիա իսլամը, որն առաջացել է Մուհամմադ մարգարեի մահից հետո իսլամական համայնքում իշխանության համար մղվող սուր պայքարում, դարերի ընթացքում

զարգացում է ապրել տարբեր իրավիճակներում: Այն մշտապես գտնվել է, հատկապես սուննի իսլամի հետ մրցակցության մեջ՝ ինքնահաստատման պայմաններում և զուգահեռաբար կատարելագործվել ու բյուրեղացել է՝ հասնելով մինչև մեր օրերը: Նման բյուրեղացման մի գործընթաց էլ տեղի է ունեցել, ինչպես նշվեց, Բուխների դինաստիայի կառավարման ժամանակահատվածում (945-1055 թթ.)՝ ալ-Ռադիի կողմից իմամ Ալի իբն Աբի Տալիբին վերագրվող իր հիշյալ ընտրանի ժողովածուն կազմելով:

Խնդրո առարկա թեման, անկասկած, արդիական է, ունի ինչպես գիտական, այնպես էլ ուսումնակրթական, գործնական և կիրառական նշանակություն: Այն հավասարապես առնչվում է արևելագիտությանը, իսլամագիտությանը, աղբյուրագիտությանը, ինչպես նաև միջկրոնական և միջմշակութային երկխոսության զարգացման և տարածաշրջանային համագործակցության ռազմավարական հիմնավորման հետ:

Հետազոտությունն իրականացվել է «Նահջ ալ-բալադա»-յի քննական հրատարակության սկզբնաղբյուրի և արաբերեն, անգլերեն, ռուսերեն և հայերեն հարուստ սկզբնաղբյուրների ու գիտական գրականության ուսումնասիրության հիման վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ ներկայացվում է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, ինչպես նաև գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակն անդրադառնում է իմամ Ալի իբն Աբի Տալիբի՝ ինչպես շիա, այնպես էլ սուննի իսլամի դավանաբանական ուսմունքների հետագա ձևակերպման հարցում նրա ունեցած դերին: Նույն գլխում ատենախոսը լուսաբանում է արձակ-բանաստեղծական սինկրետիկ բանավոր մշակույթից դեպի գրավոր ձևակերպման անցման գործընթացները և դրանց առանձնահատկությունները՝ հաշվի առնելով, որ ժողովածուում ներառված տեքստի պատմական ժամանակաշրջանը VII դարն է, իսկ ձևակերպման ժամանակահատվածը արդեն X դարի Աբբասյանների ժամանակաշրջանն է:

Ատենախոսության երկրորդ գլխում (ալ-Շարիֆ ալ-Ռադին. ժամանակաշրջանը և Նահջ ալ-բալադան) վեր են հանվում հավաքող-հեղինակի՝ ալ-Շարիֆ ալ-Ռադիի կենսագրական մանարամասները, նրա գործունեության ժամանակաշրջանի՝ Բուխների դինաստիայի կառավարման ռազմա-քաղաքական, կրոնական, սոցիալ-

մշակութային և գաղափարական փոփոխությունների ազդեցությունը «Նահջ ալ-բալադայի» ձևակերպման համատեքստում:

Տաթևիկ Մկրտչյանի ատենախոսության երրորդ և չորրորդ գլուխներն առավել ուշագրավ են և ծավալուն: Երրորդ գլուխը նվիրված է «Նահջ ալ-բալադայի» աղբյուրի կազմման ալ-Շարիֆ ալ-Ռադիի նպատակների վերհանմանը, ինչպես նաև միջնադարից մինչև մեր օրեր ժողովածուի ընկալումների ներկայացմանը: Հետաքրքրական է ատենախոսի կողմից 13-14-րդ դարերից սկսված՝ աղբյուրի վերաբերյալ միջնադարի արաբալեզու հայտնի մտավորականությունների կասկածների հետագծի ներկայացումն ու քննարկումը մինչև մեր օրերը:

Ատենախոսության վերջին՝ չորրորդ (Նահջ ալ-բալադայի կառուցվածքը և բովանդակությունը) գլխում ատենախոսը անդրադառնում է երեք ժանրային կառուցվածքային միավորների վերլուծությանը ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային շերտերի վերհանմանը: Այսպիսով՝ քննական վերլուծության է ենթարկում IX դ. ականավոր հեղինակ ալ-Ջահիզի «Իմամ Ալիի հարյուր արտահայտություն» և ալ-Ռադիի հիշյալ ժողովածուների բովանդակությունների նպատակադրության տարբերությունների հիմքերով պայմանավորված տեքստի ընտրության և ձևակերպման առանձնահատկությունները:

Ատենախոսի աշխատանքը հիմնավոր կերպով ներկայացնում է շիա իսլամի կրոնագաղափարական հիմքերի ձևավորման հարցում «Նահջ ալ-բալադա» ժողովածուի ձևակերպման շրջանի հասարակական և քաղաքական, կրոնադավանաբանական միջավայրի առանձնահատկությունների ողջ համադրությունը մի կողմից, և դրանում ալ-Շարիֆ ալ-Ռադիի ունեցած դերը՝ մյուս կողմից:

Ընդհանուր առմամբ, աշխատությունն ունի թեմայի տրամաբանությամբ պատճառաբանված կառուցվածք, որը նպաստել է հեղինակի առջև դրված նպատակների և խնդիրների լավագույն ձևով իրագործմանը: Ատենախոսության սեղմնագիրն ու հեղինակի հրատարակած գիտական հոդվածներն ամբողջությամբ արտացոլում են աշխատության բովանդակությունը: Հեղինակի եզրակացությունները հիմնավոր են և համոզիչ:

Ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ ներկա ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից և բացթողումներից՝

- Ատենախոսությունը մեծապես կշահի, եթե հեղինակն այն հրատարակելու ժամանակ պատմական ակնարկի շրջանակներում ամփոփ ձևով շարադի

սունի-շիա իշխանության համար մղվող պայքարի քաղաքական և կրոնական ասպեկտները մինչ ալ-Շարիֆ ալ-Ռադիի ժամանակաշրջանը:

- Թե՛ արաբագիտության, և թե՛ արևելագիտության մեջ Մուհամմադ մարգարեից հետո Արաբիայում իսլամական Ումայյի (համայնքի) ընտրությունների արդյունքում իշխանության գլուխն անցած առաջին խալիֆաները կոչվել են «ալ-խուլաֆա՛ ալ-ռաշիդուն»: Այս բառակապակցությունն օգտագործելիս հեղինակը արաբերեն «راشد» (ռաշիդ) բառը թարգմանել է «առաքինի», որը, կարծում ենք, այնքան էլ չի արտահայտում բառի բուն իմաստը: «Ռաշիդը» ունի մի շարք իմաստներ՝ բարեպաշտ, արդարադատ, արդարամիտ, ուղղամիտ, շնորհալի, հասուն, իմաստուն և այլն: Այս պարագայում, կարծում ենք, ճիշտ կլինի օգտագործել բարեպաշտ կամ արդարադատ խալիֆա, ոչ թե «առաքինի խալիֆ»:
- «Ամիր ալ-Մու՛մինին» - «հավատացյալների էմիր» բառակապակցությունը կարելի է փոխարինել «հավատացյալների առաջնորդ, ղեկավար» բառակապակցությամբ (էջ 4):
- Հատուկ անուններից առաջ դրվող արաբերենի «ալ» (ال) որոշիչ հոդը, մեր կարծիքով, պետք է գրել փոքրատառ, բացառությամբ նոր նախադասությունների դեպքում: Մեզանում հաճախ շփոթմունք կա (ال) (Ալ) – տոհմ, ցեղ, դինաստիա և «ال» որոշիչ հոդի հարցում:
- Հեղինակի օգտագործած «شيعة» (շիա՛) գրվում է «շիա» իսկ «շիականություն» բառը գրվում է «շիայականություն»: Կարծում ենք ճիշտ կլինի գրել «շիականություն»: Մեկ այլ դեպքում հեղինակը «շիա» ուղղություն բառին փոխարինել է «ճյուղ» բառով:
- Աշխատությունում օգտագործվող արաբական տիտղոսներ և եզրեր, ինչպիսիք են՝ «քաթիբ», «շաի՛ր», «ալիմ», «ադիբ» և այլ բառեր չունեն հայերեն ծանոթագրություններ (էջ 53-54):

Ատենախոսությունն ունի տեխնիկական վրիպակներ (Իմամ բառի մեծատառով և փոքրատառով գործածություն) և լեզվաոճական անհարթություններ, օտար անունների ոչ ճիշտ տառադարձումներ, միևնույն հատուկ անվան մեկից ավելի ձևերի գործածություն (ալ-Մուֆաննաբբի/ալ-Մուֆաննաբի) և այլն:

Այս և այլ կարգի դիտողությունները բնավ ստվեր չեն գցում Տ. Մկրտչյանի գիտական արժանիքների վրա: Անառարկելի է, որ, լինելով խնդրո առարկա թեմայի համակողմանի առաջին ուսումնասիրություն, լույս է սփռում նրա շատ ասպեկտների վրա: Իր բովանդակությամբ և քննարկվող հիմնախնդիրների տեսանկյունից

ատենախոսությունը նորույթ է հայ արևելագիտության և իսլամագիտության մեջ, որտեղ նկատելի է հեղինակի՝ Տաթևիկ Մկրտչյանի ինքնուրույն գիտական հետազոտություններ կատարելու կարողությունն ու հմտությունը:

Ելնելով վերոնշյալից՝ գտնում ենք, որ Տաթևիկ Մկրտչյանի «Նահջ ալ-բալադան» որպես վաղ շրջանի շիա իսլամի ուսումնասիրության աղբյուր» վերտառությամբ է.00.05 «պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է «գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ին, իսկ նրա հեղինակը լիովին արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:




Արտակ Արշակ Փոլադյան
Թունիսում, Մարոկկոյում և Մավրիտանիայում ՀՀ ա... արգ և լիազոր դեսպան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

հաստատում եմ՝

ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի ստորագրության իսկությունը

Դեսպանի օգնական
Արփի Ավետիսյան



18.02.2026թ